ընդարձակագոյն եղեւ քան զմասն Լատինաց. և աշակերտ իւր Յակոբ վարդապետ եհան անդ Ջուր քաղցր։ Նորոգեաց նաեւ զեկեղեցին և զարդարեաց զնա սպասուք։

Իսկ այլազգի բնակիչք Թաղին մախացեալ ընդ այն, երկնչին 'ի միտս իւրեանց և սպասէին դիպող ժամու յափշտակել զտեղին 'ի ձեռաց քրիստոնէից։ Յետ անցանելոյ ժամանակս ինչ, յաւուր միում Միւֆթի Թաղին այնորիկ եկեալ փակեաց զդուռն տանն, զոր չինեաց Գրիգոր, եւ կնքեաց զնա, և մնաց այնպէս ամիս իրրեւ 4։ Եւ 'ի խնդրել նորա դրամն. ետուն նմա 200 դահեկան, և խոստացան եւս՝ եթէ բացցէ զդուռն։ Ի սին ժամանակի եկեալ էր անդ Գրիգոր վարդապետ Կեսարացի 'ի քաղաքէ իւրմէ. դիմեցին առ նա քահանայք եկեղեցւոյն. եւ յայտ արարեալ նմա զդիպուածսն, խնդրեցին լինել ձեռընտու ինքեանց. այլ նա փոխանակ օգնելոյ նոցա՝ սաստեաց և յանդիմանեաց զնոսա. «Ո՛վ իցէք դուք որ յայդպիսի գործս լինիք ձեռնամուխ. զի Լատինաց և բնիկ բընակչաց պարտ է հոգալ զայդ խնդիր»։ Եւ այլ խիստ և յիմարական բանիւք զզուեալ մերժեաց զնոսա յերեսաց իւրոց. և նոցա տարակուսեալ մանաւանդ թէ յիմարեալ իսկ՝ գնացեալ առ այլազգին և յետս պահանջեցին զդրամն զոր ետուն։ Եւ նորա տեսեալ թէ անկեալ են 'ի մտաց Հայք, ազդ արարեալ կոչեաց փութապէս առ ինքն զդասս գիտնականաց և զամբոխ մեծ 'ի ժողովրդոց, և գնացեալ նոքօք յեկեղեցին ետ ձայնել զժամ աղօթից ըստ օրինաց իւրեանց, և կացին ամենեքեան յաղօթս եւ փոխեցին 'ի մզկիթ. տեսեալ զայս Հայոց պաշարեցան 'ի ոուդ մեծ։

Իսկ Գրիգոր վարդապետ՝ զոր Խուլ կոչէին, անտես արարեալ զթշուառութիւն ժողովրդոցն, պատուղեալ էր զգործովք իւրովք՝ եւ ջանայր արկանել աղմուկ խռովութեան 'ի մէջ ազգին սակս խնդրոյ Պատրիարքութեան, զի հակառակեալ ընդ Յովհաննու վարդապետի՝ հալածեաց զնա 'ի Պուրուսայ. և ինքն տիրեաց բռնութեամբ Պատրիարքական աթոռոյն՝ առանց Արքունի հրամանի, եւ եղեալ 'ի տեղի իւր փոխանորդ զՅովհաննէս վարդապետ զԵղնկացի, որ կոչէր Բէկ Ռէխոբէ Յոգ, և ինքն գնաց յաշխարհն Լեհաց։ Իսկ քահանայք և ժողովուրդք եկեղեցւոյն Ս. Նի-